

Յովհաննու Ոսկերեքանին ասացեալ աղօթք

Գոհանամ եւ մեծացուցանեմ եւ փառաւորեմ զքեզ Տէր Աստուած իմ, զի զիս զանարժանս արժանացուցեր յաւուր յայսմիկ հաղորդակից լինել աստուածային եւ սոսկալի խորհրդոյ քում, անարատ Մարմնոյդ եւ պատուական Արեանդ:

Վասն այսորիկ զոսա ի բարեխօսութիւն ունելով՝ աղաչեմ յամենայն աւուրս եւ ի ժամանակս կենաց իմոց ընդ սրբութեան քոյ պահեա զիս. որպէս զի յիշելով զբարեգթութիւնս քո եւ կենդանի եղեց ընդ քեզ: Որ վասն մեր չարչարեցար եւ մեռար եւ յարեար:

Մի մերձեսցի, Տէր իմ եւ Աստուած, խորտակիչն, կնքելով անձին իմոյ պատուական Արեամբդ քով: Ամենակարող, մաքրեա զիս սոքօք յամենայն մեռելոտի գործոց իմոց, որ միայնդ ես անմեղ:

Ամրացո զկեանս իմ, Տէր, յամենայն փորձութենէ, եւ զպատերազմողն իմ դարձո յինէն յետս, պատկառեալ եւ ամաչեցեալ՝ որչափ յառնէ ի վերայ իմ: Ամրացո զգնացս մտաց եւ լեզուի իմոյ, եւ զամենայն ճանապարհս մարմնոյ իմոյ:

Լեր հանապազորդ ընդ իս, ըստ անսուտ խոստմանց քոց, թէ՛ որ ուտէ զՄարմին իմ եւ ըմպէ զԱրիւն իմ, նա յիս բնակեսցի եւ ես ի նմա: Դու ասացեր մարդասէր, կացո զքանս աստուածային անլուծելի հրամանաց քոց: Քանզի դու ես Աստուած ողորմութեան, եւ գթութեան, եւ մարդասիրութեան, եւ պարգեւիչ ամենայն բարեաց, եւ քեզ վայելէ փառք, հանդերձ Հարբդ եւ ամենասուրբ Հոգւովդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ապա տեառնագրեսցէ զինքն եւ խնդրեսցէ ի ճշմարտեն Աստուծոյ զպէսպէս հայցուածս անձին իւրոյ եւ ժողովրդեան եւ աշխարհի: Եւ թողութիւն խնդրեսցէ վասն իւրոց թշնամեաց եւ ատելեաց: Եւ անդէն ահիւ եւ դողութեամբ ճաշակեսցէ ի Մարմնոյն եւ արբցէ ի Բաժակէն՝ ասելով.

Հաւատով հաւատամ յամենասուրբ Երրորդութիւնդ, ի Հայր եւ յՈրդի եւ ի Հոգիդ Սուրբ: